

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

(Մտարարադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“)

Խմբագրատանը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1880 ԹՎԻՆ

ՀՐԵՏԵՐԵԿՎՈՄՄ ԷՆ ԱՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոնների հե-
տեւալ օրերից:

Լրագրի գինը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ԱՆՓԵԿԵՆ ՀԵՌԵԳԻՐՆԵՐ: ՄԵՇԿԻ տարեկան գինը
10 ռուբլի է, կէս տարվան 6 ռուբլի: Գրել կարելի է ՄԵՇԿԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԵՋ:

ԱՄԵՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատր:
Օտար քաղաքներից պէտք է գիմել հետեւալ հասցեով
Тифлис. Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Պրօգրամմայի խնդիր—էն քիչին տեսնու-
թիւն: Նամակ Մօսկվայից: Նամակ Խմբագրին:
Ներքին լուրեր: Արտաքին տեսնութիւն:
Ֆրանսիա—Յայտարարութիւններ: Բանասիրա-
կան: Հանապարհորդական նկատողութիւններ:

ՊՐՕԳՐԱՄՄԱՅԻ ԽՆԴԻՐ

IV

Խրաբանչիւր ազգի մէջ կնոջ
ընտանեկան և հասարակական դը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԱՊԱՐ ՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեղեցիկների 15-ին եւ դեռ թափառում էի Ղար-
սի նոյն, խուլ, օձապտուտ և կեղտոտ փողոցներում:
Թէև վաճառականութիւնը բոլորովին ընկած է,
բայց օրըստօրէ նոր նոր վաճառականների թիւը
դարձեալ աւելանում է: Թանգութիւնը հասել է
իր վերջին կէտին. ապրուստը չափերի համար սե-
ղաւէտ է դառել. բոլորը քաղցած, տոբաքները
կաների տակ գլխեր ցերեկ ալիւր են որոնում,
բայց իզուր, ալիւրը ծաւալ է դառել, ոչ ոք նրա
ետեկից չէ հանում: Երբեք մօտենում է, ինչ
պիտի ուտենք, ինչ պիտի ցանենք... հառաչելով
կրկնում են դարսեցիք և նրա չըջկալ գիւղացիք:
Մի խօսքով թանգութիւնը Ղարսի շրջաններից
հայածել է կենդանութիւն, ցնծութիւն, ուրախու-
թիւն, ամենքն էլ մի կտոր չոր հացի վրա են մը-
տածում: Ոչինչ նոր ու նախանձելի երեկոյ չը կայ
այստեղ: Երկուսն զարդաներ կամայ կամայ
քայլափոխում են: Մի դաստանից բաղկացած
Շուշանիկան օրիորդական դպրոցի մասին հետե-
ւեալ նկատողութիւններն են աչքի ընկնում: Նախ
72 աշակերտուհի այգիլի մի փոքր սենեակում
սեղմված տեղաւորելով թէ հակամակնաւորական
է և թէ հակաառօջապահական, մանաւանդ զը-
րօթիւնների ժամանակ ոչինչ կարողապահութիւն
չէ կարելի պահել: Երկրորդ միասակար է և այն,
որ 7 տարեկան երեխան իրանից երկու անգամ
մեծի հետ դասակցութիւն է կազմում և հետեւա-
բար չը կարողանալով իր ուժեղ ընկերի հետ
ճանապարհորդել, ուժից ընկնում, թուլանում ու
կէս ճանապարհի վրա է մնում: Այս մասին թող լաւ
մտածէ ուսուցչական խումբը հողաբարձական խմբ-
ի հետ, որոնք ժողովների կազմելու և մանկա-
վարական զանազան կարևոր հարցերի վրա խօսե-

լու տարաբախտաբար աւելորդ ժամանակ չունեն:
Հողաբարձների դպրոցների դռնից թանգութիւնը
անցնելու մասին ոչինչ չէ կարելի ասել, քանի
որ այս ցաւալի երկու թիւն մեծ քաղաքներում
էլ է երեւում: Գուրս եկալ Ղարսից՝ բերելով ինձ
հետ չափ ցաւալի տպաւորութիւններ:

Նոյն ամսի 17-ին մտայ Ալեքսանդրապոլ: Ինչ
տեսայ. գողութիւն, բռնութիւն, չափ յաճախ քե-
թակարանութիւն, ամեն բոլոր անամթ բառե-
րով հայտնաբերելու ու կծու կծու յիշողներ: Այս
տարվալ անտեսանելի թանգութիւնն էլ չը կարո-
ղալու սանձաճարել Ալեքսանդրապոլի ստանակ,
անգործ, անամթ չափաւորներն, էլ ուրիշ ինչ
հնար մնաց, բայց խօսեցալից, Այս, միայն խօսե-
ցալի սուր մանգաղը կարող է այս դուռ հայկա-
կան քաղաքը մաքրել յիշեալ սրիկաներից: Վեր-
ջին ժամանակ Ալեքսանդրապոլ մտան և րկու
սուր Գրիգորի (պ. պ. Պատկանեանց և Բար-
խուդարեանց): Տնտեսը ինչպէս պիտի նկարագրեն
Ալեքսանդրապոլի բարոյական կողմը:

Ժամը 8-ից քաղաքը անց էր, որ ես մտայ Հո-
գեռո դպրոցի բակը, որտեղ մօտաւորապէս խա-
ղում էին 300-ի չափ երեխաներ: Ես չը գիտեմ,
զուգէ այդ երեխաները իրանց սովորած բոլոր ա-
ռարկաների մէջ շատ յառաջադէմ էին, բայց քա-
ղաքավարութեան, համեստութեան մէջ շատ ու
չափ յետ էին. այլ ես կըրկալեցի նրանց թէ
խաղաղ, թէ անյիշելի բառերով և բարձր ձայ-
նով միմեանց անխնայ հայտնաբերելու իսկ ինչ վե-
րաբերում էր նրանց գոտում գոչումին, սարսա-
փելի էր, կատարեալ պատերազմ: Չանգալել խի-
ցին. տեսնել էր հարկաւոր թէ ինչպէս, զիւր,
բոլոր, իրար գլխի թափվելով ներս թափվեցին դա-
ստաներում և չարժանեցին մի և նոյն աղմուկը
մինչև վարժապետների ներս մտնելը:

19-ին դուրս եկալ Ալեքսանդրապոլից, անցալ
Ղոնախ-Ղառն, Չալուա, Աղբուլաղ, Նալբանդի
և Ղչաղ, որտեղ բոլորը միմեանց աղէտ ու երկ-
րաբործ ժողովուրդներ են և որոնք իրանց կենս-
քում դպրոցի հոսն էլ չեն աւել: Արդեօք վիճա-
կաւոր առաջնորդը այցելել է այս թշուառ գիւ-
ղերին, հասկացրել է իրթութեան նշանակութիւնը,
յորդորել է դպրոց բանալու համար... Թէ միայն իր

րութիւնը կազմել է այն պատ-
մական շրջանների և պայմանների
համեմատ, որ ունեցել է և ան-
ցել այդ ազգը: Հայ կնոջ դրու-
թիւնն էլ առաւ է եկել նոյն բը-
նական կերպով:

Հայ կինը, ամենախոր հնու-
թիւնից սկսած մինչև մեր ժա-
մանակները, որոշվել է իր խիստ
աշխատասէր և գործունեայ բնա-
ւորութեամբ, վասնորոյ նա եղել
է այն գլխաւոր գործիչը, որը
պահպանել է ոչ միայն ազգի բա-
րոյական, այլ և նորա նիւթական
բարօրութիւնը: Այսպէս գործի-
նակ, եթէ հայը պարապել է եր-
կրագործութեամբ, խաշարածու-
թեամբ, արհեստով ու վաճառա-
կանութեամբ, այդ ամեն պարապ-
մունքների մէջ նա շահվել է կնոջ
ամենագործող մասնակցութեամբ:
Հայը մշակել է երկիրը, վարել է,
ցանել կինը հնձել է, կասել, ցորեն
հաւաքել, խաբարել: Հայը խաշ-
ներ և հօտեր է արածացրել, կի-

նը կթել է նոցա և նրանց կա-
թից պանիր, սեր, իւղ և չորա-
թան շինել ու ապահովել իր որ-
դոց պաշարը մի ամբողջ տարուայ
համար: Հայը խուզել է իր ոչ-
խաւերները, հայուհին բուրդ է գը-
ղել, մանել, հինել հիւսել, կրթել
ու գործուածներ շինել: Հայը
վաճառականութիւն է սկսել հա-
յուհին բուրդի ու մետաքսի ապ-
րանքներ է պատրաստել իր ա-
մուսնի վաճառաշաւութեան հա-
մար: Հայը որ և իցէ արհեստով
է պարապել մուրճ ու խարտոցը
ձեռին, հայուհին աւելի արդիւնա-
բեր արհեստով է պարապել ին-
կը, ճաղ ու ճախարակը պտտնե-
լով: Հայը վերջապէս ամեն երե-
կոյ որդիքը շուրջը հաւաքած սաղ-
մոս է կարգացել, հայուհին նոցա
քնացնելիս «եկեցէ» է ասել:
Մէկ խօսքով ամեն տեսակ գոր-
ծունեութեան մէջ, հայուհին ոչ
միայն չէ համաձայնիլ յետ մնալ
տղամարդից, այլ ևս կարծես նա

սեղու հետ: Ես էլ այդ խօսակցութեան մէջ ըն-
կալ և կամայ կամայ մեր խօսակցութիւնը եկաւ
Ղարսից: Դարաբերիս զանազան կէտերի վրա:
Խմբագրի հարցախօսութիւններից և պ. դարա-
բերիցեցու պատմածից հետեւալ եղբակցութիւնը
դուրս եկաւ, այսինքն Ղարսիցի խօսակցութեան
պատմածով, 100 տունը (մի երկու երեք
տուն հարուստները այս հայի մէջ չեն) հազիւ
հազ ծայրը ծայրին հասցնում և իրանց գերդա-
տանը հազիւ հազ կառավարում են. մնացեալ 140
տունը մինչև կոկորդը պարսերի մէջ խրված են:
240 տան վրա, որից տարեկան քանադասապատ-
կան արդիւնք հազիւ հազ կը գոյանայ 600 ռուբլի,
այսմ պատրաստի կայ երկու քանադաս, որոնցից
մէկը գրի սեն ու սպիտակ հագիւ ջոկում է:
Գեռ այս բաւական չէ, մի տիրացու էլ մի քա-
նի հարկուր դրպանը դրել պատրաստվում է այ-
սօր կամ վաղը ձեռնադրելու: Ուրեմն կը լինեն
երեք քանադաս, իւրաքանչիւր տարեկան ռոճիկը
կը լինի 150—200 ռ. (տարին գիտէ): Մի մարդ,
այն էլ քանադաս՝ 200 ռուբլիով ինչպէս պիտի կա-
ռավարէ իր 10—15 անձիւններից, (որոնցից ոչ
մէկը աշխատող չէ) կազմած գերդաստանը: Այս
վերջին քանադասացու տիրացուն ոչ միայն հասարակ
ուսում չէ աւել, այլ մինչև ներկայ տարուս նո-
յիւնների վերջն էլ դասաւորութիւն էր անում:
Չարմանալի երեկոյներ են տեսնում աշխարհումս.
երեկ դասար, այսօր քանադաս. երեկ այդ էր մոր-
թում, այսօր պատարագ է մատուցանում, երեկ
զուս միս, լաւ միս էր ըզաւում, այսօր անաւ
պատարագի աւալ կանգնած, ճառ է ք, կերէ ք, այս
է մարմին իմ... է աղաղակում:—240 տուն, 2
քանի քանադաս շատ հեշտութեամբ կը կառավա-
րեն, ուրեմն երրորդն էլ ձեռնադրել տալու ինչ
հարկ կայ: Ուրիշ բաներում չը գիտեմ, միայն այս
բանում դարաբերիցեցու անհասկացողութիւնը շատ
պարզ փայլում է: Այնպէս, նամակս երկարանում
է և գրելիքս չէ վերջանում: Փետրվարի վերջերում
ես դարձեալ Ղարսից խուզում կը լինեմ և պակասե-
րը կը լրացնեմ:—25-ին դուրս եկալ Ղարսիցի
սից և ուղևորվեցալ դէպի Թիֆլիս:

Խ. Փ. Գ.

և սրանց ամենքն Եփրատի և Տիգրիսի հայերի հետ, բոլոր հայերի այս նուիրական և սուրբ վայրը իր փառաւոր Հայրապետի ազգային ձեռնարկութիւններով կամենում է զօրանալ, հայրենական քաջարթուն պահապան լինելով իսկ առանց իշխանի միաձին հզօրութեան հայերի ցիրօցան ուղծերը միշտ տկար կը լինեն ամեն տեղ մեր ամենաուսուցին և ամենափառաւոր թշնամուն—տղիտութեանը և չար կիրքերին—յաղթելու համար։ Ուրեմն Հայաստանի եկեղեցու որ հարազատ դաւաճել էր մեկնի օգնութեան ձեռք... Եւ թիֆլիսի խելացի, աշխու և հայրենասէր ժողովուրդը հասկացաւ այս և չը նայելով բազմադարեւ արգելքներին, վայելչապէս յարգեց Վեհափառ Հայրապետի խօսքը և քաղաքագլխի Յիսուսի ծնունդը տօնելով, բարեգործութեան աւագանի մէջ, Ս. Լիւթիմանի վերաբերմամբ վերստին ծնվելով, արեւելեան իմաստուն մոգերի պէս մատոյց սուրբ Լիւթիմանին ճեմարանում հայկեան ազգի պաշտօնէութեան համար պատրաստվող հայազն մանուկներին անունով իր անկին։

Փառք և պատիւ թիֆլիսի Լիւթիմանսէր ժողովրդին։

Խոնարհ ներողութիւններ խնդրելով, եթէ ոմանց երբեմն անհանգստութիւն պատճառեցի, կրկին և կրկին մատուցանում է անկեղծ և սիրով սրտի ամենախորին շնորհակալութիւններ թիֆլիսի ժողովրդին Ս. Լիւթիմանի վարդապետը, որը բոլոր իր կենսաւ յուրեւրած է Հայաստանի եկեղեցուն և ազգին, միայն թէ հայկական ազգին ու բարոյական և մատարական վերակենդանութեան մեծ գործին աշխատակից լինել կարողանար իւրովսնան, բոլորանուիրաբար և ամենայն հաւատարմութեամբ կատարելով ազգային Հայրապետի ազգօգուտ պատուէրները։ Եւ կազմելով ժողովին—գուցէ հասնեն այն փափագելի փոխարար օրերը, երբ ամենքս թէ հայկերականներս և թէ աշխարհականներս կենանք զգրք—սուրբ Աւետարանի ճշմարիտ հոգով թափանցված, զնանք զէպի առաջ, առանց կրքերի և եղբայրական սէրով այն դրօշակի տակ խմբվելով, որի վրա դրօշակած են։ Ըյս, ճշմարտութիւն, բարութիւն, աշխատութիւն, մարդասիրութիւն և հայրենասիրութիւն, կատարելագործվելով անդադար դար բարոյագէտ Մեծ Վարդապետի յառաջդրված թանկան քարոզի համեմատ։ Եղբուք, կատարեալք որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

Խորհն վարդապետ Ստեփանէ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք լոնդոնի Աշխարհագրական լոկալութեան փոքրիկ հրատարակութիւնը, որ պատրաստւում է իր մէջ զօգուտ Սեդրաքան Արծր ռուսու գաղափարութիւնը, որ նա կարողացել էր յիշատակել ընկերութեան մէջ իր յարաբան ճանապարհորդութեան մասին։ Գաղափարութեան վերաբերելով այսպէս է «Bericht über die Reise im Ural im Sommer 1879, von Dr. A. Arzruni»։ Գաղափարութիւնը շատ հետաքրքիր է և տալիս է բաւական տեղեկութիւններ Ռուսիան երկրի մասին ոչ թէ միայն նրա միջնադարեան հարստութիւնների, բայց և այդ երկրի բուսական հարստութեան վերաբերութեամբ։ Գոհւթոր Արծրունի նկարագրում է նոյնպէս Սիբիրի դիմախի աշխարհագրական և տեղագրական դիրքը որտեղ նա գլխավորապէս իր հետազոտութիւնները արել էր և որի քարտեզի կազմելը յանձնած էր նրան Ս. Պետրեւիչի միջնադարեան ընկերութիւնը։ Բացի սորանից երկուստարգ ուսումնական նկարագրում է և Ռուսիան երկրի բնակիչների բարք ու վարքերը և նրանց ապրելու եղանակը։ Դոյնպէս մի հետաքրքիր մասն է կազմում գաղափարութեան մէջ Սիբիրի վիճակի արդիւնաբերութեան և երկաթեայ գործարանների զբաղմունքի նկարագրերը։

Յունվարի 22-ին պ. Ս. Ս. Վեհափառ իր խորով մի կոնցերտ տուեց Արծրունու թատրոնում։ Լոնցերտը շատ լաւ անցաւ և թատրոնը ին էր բազմութեամբ, որ ոչնորոված կերպով ամեն երգից յետոյ ծափահարում էր։ Յաւալի է որ թատրոնում հայերը գրեթէ բոլորովին բացակայ էին։ Եւ թէ ցրտից են վախենում նրանք, կարող ենք հաւատացնել որ Արծրունու թատրոնում արած փոփոխութիւններից և վերանորոգութիւններից յետոյ անհամեմատ աւելի տաք է, քան թէ պ. Պալաւ թատրոնում։ Բայց հայերի համար շատ օգտաւէտ կը լինէր լսել պ. Սալմաստիւսի խօրը, որովհետեւ մենք հայեր և կովկասեան բոլոր ազգերը բոլորովին խորական երգեր չունենք և վատ չէր լինի մեզ համար փոքր ի շատե տեղեկութիւն ստանալ թէ ինչպէս է լինում մի կանոնաւոր և զեղեցիկ կերպով կազմակերպված խօրը։

Շնորհակալութեամբ ստացանք Վատրարի վերնազգով լրացրէն գրքովը (քաղաքացի Գաբաշ Վաղոր հոգևորականութեան մասին արած դատաւորութիւնները)։ Գա թարգմանութիւն է հայոց զինուորական ամսագրից։ Թարգմանեց Գ. Նիսիմաճարով։ Հրատարակեց Գ. Ջալիկանով։ Տպվել է ներկայ 1880 թիւին թիֆլիսում, խնթաձէի տպարանում։

Յունվարի 15-ին Վշակը ունէր 550 բաժանորդ, իսկ յունվարի 23-ին, այսինքն ութ օրից յետոյ, մենք ունէինք 660 բաժանորդ, այսինքն 110 աւելի։ Ուրեմն ստորագրութիւնը այնքան վատ չէ գնում, միայն թիֆլիսում նա բաւական վատ է գնում։ Թիֆլիսցիները, այդ օտարացած հայերը, որոնք 50,000 թւով են, մինչև այսօր տուել են մեզ միմիայն 150 բաժանորդ, ուրեմն թիֆլիսցի բոլորովին հարկաւորութիւն չունի հայոց ամենօրեայ լրագրի մէջ։ Եւ ամենաանտարբերները զէպի իրանց մայրենի լեզուով հրատարակվող լրագրերը բարձր ուսում ստացածներն են։

Երկու թիֆլիսցի հայ վճառականներ անցնում են փողոցում։ Վ. յս տարի գրվեցին լրագրին, հարցնում է մինը միւսին հայերէն լեզուով—«Գրքի վեցի, եղբայր, «ՕՃՅՈՐԵ» լրագրին գրվեցի»։ Ինչի՞նչ Վշակին չես գրվում դարձեալ հարցնում է առաջինը—«Ե՛ր, եղբայր, ես Վշակը չեմ հասկանում»։ «Բո հօրն ողորմի, «ՕՃՅՈՐԵ»-ը երկի շատ ևս հասկանումս պատասխանում է միւսը։

Շնորհակալութեամբ ստացանք Գեղարդութեան օրինակները որ գրեց հայոց դպրոցների համար Մալար Տէր-Սարգսեանց։ Թիֆլիս և Ս. Պետրբուրգ, 1880 թիւին։

Շնորհակալութեամբ ստացանք Ն. Տէր-Ղևոնդեանցի «Մարտնի լեզուն դասագիրքը Գ. և Դ. տարի, երրորդ տպագրութիւն»։ Թիֆլիս, 1880 թիւին, Յովհ. Մարտիրոսեանի տպարան։

Շնորհակալութեամբ ստացանք Կ. Պոլսում Փրբանսիերէն լեզուով տպված «Mémoire sur la question arménienne» գրքովը։ Վ. Պոլիս, 1880 թիւին Արամեան տպարան։ Գա հայոց խնդրի վրա յիշատակագիր է, որ ներկայացնում է մեծ պետութիւններին 1878 թիւին, Բերլինի կոնգրեսի առիթով։

«Голосъ» լրագրին ՎԱՐՇԱՎԱՅԻՑ գրում են, որ օրերումս պօլցիան կարգադրութիւն արաւ, որ Վարշավայի բոլոր աների դռները փակվեն դէպքով 11 ժամին։

Յունվարի 25-ին, ուրբաթ օր լինելու է Թիֆլիսի Գործակատարների կուրում մի դիմակաւոր պարահանդէս (մասկարադ) յօղուտ սովորանքների։

Երեք գրում են ԼԱԲԻՆՍԿԱՅԱ ստանիցայից (Կուբանեան վիճակում) որ այս տարի այնպիսի խիստ ձմեռ է սնում այդտեղ, որ ձեր մարդիկ այդ տեսակ ցրտեր չեն յիշում։ Վարսափելի ձիւն է գալիս, գրում է մեր թղթակիցը։ Անցեալ տարին այս ժամանակ ալիւրի պուրջ արծէր 70 կօպէկ, իսկ այժմ 1 Բ. 50 կօպ., իւղի ֆունտը արծէր 25 կօպ., այժմ 40 կօպ., հացը արծէր 3 կօպ., իսկ այժմ 6 կօպէկ։ Ամեն ուսեկները խիստ թանգ են։ Բայց ձիւնի առատութեան պատճառով յոյս կայ այս տարի թէ հացը և թէ դանազան մրդեղէնները արժան կը լինեն։

ՆՈՒՆՈՒՑ սեզ գրում են։ «Գրքից բաւական ցորեն և ալիւր բերվելով, այժմ հացը բաւական է ժամանաց։ Անցեալ ամիսը ցորենի պուրջ 3 Բ. 40 կօպէկով հազել էր առնվում, իսկ այսօր պուրջ ծախվում է 2 Բ. 40 կ.։ Այս տարվայ ձիւնի առատութիւնը յոյս կայ որ բաւական կօգնի հայրի է ժամանակաւ։ Այս արշիֆից աւելի բարձրութեամբ ձիւնը ծածկում է այժմ Նոխու գաւառը և յոյս կայ որ դարնան միների հետքն էլ չի երևայ»։

Կենդանիների հովանաւորութեան ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան անդամները հրախրվում են յունվարի 27-ին երեկոյեան 7 ժամին ներկայ գտնվել ընդհանուր ժողովի արտաքոյ կարգի համար ըմբշկանոցի հարցը զննելու համար։

ՄՅՍԿԻՆԱՅԻՑ մեզ գրում են։ Վարդէն երկու շաբաթ է, որ ՄՅՍԿԻՆԱՅԻՑ Բախարակագործութեան և նկարչութեան ուսումնարանում հանդէս է բացվել աշակերտական աշխատութիւնների, որոնց մէջ կան մի քանի ընտիր և աչքի զարկող պատկերներ և քանդակներ։ Բայց այս բոլորի մէջ մանաւանդ դրաւում է այցելուի ուղարկութիւնը մի գեղեցիկ քանդակ—«Մերկացող մանուկը»։ Չեր առաջն կանգնած է մի փղբոյի երեսայ համարեա արդէն տկար և հանում է իր վերջին զգեստը. այնքան նուրբ է նրա մարմինը, այնքան ճիշտ և ընդամենն նրա մկանսեղանների ծալքերը, կաշու ծալուածքը, ոտների և ձեռների դուրծիւնը, երեսի գծագրութիւնը, որ կարծէք թէ կենդանի է նա—մի պատուական աշխատութիւն, որ վարձատրած է արաթեայ մեղալով։ Այս գեղեցիկ քանդակի հեղինակը մի տաղանդաւոր հայ երիտաւոր է։

սարդ է—պ. Ղէվէնեանց՝ մեծ. պ. Անանեանցի սաներից մէկը, որ արդէն մի քանի տարի ուսումնաւորում է քանդակագործութեան արուեստը և ինչպէս երևում է՝ շատ է խոստանում ապագայում։ Յանկալի էր, որ այդպիսի չնորձով երիտասարդները չը բաւականանային թիւթն յաջողութիւններով և հրապուրելի գովեստներով և աշխատէին աւելի կատարելագործել իրանց արուեստը։ Եւ օգտայի զեղարուեստական կենտրոններում։ Պէտք է յուսալ, որ պ. Անանեանցը կէս ճանապարհէ վրա չի թողնի իր տաղանդաւոր սանին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՍՆՍԻՍ

Ժիւլ-Մալրի խօսած ճառերից ամենահզօրն ու առաջնակարգը նրանք են, որոնց մէջ յարձակվում է Մեքսիկական արշաւանքի դէմ, որին նա ոչնչարեց այս բաւի բուն մարդիկ բացի այս, նա իր հետադարձ շնորհներ արձակեց նոյնպէս պ. Բուէի, ինչպէս և առաջ պ. Բի-յոի դէմ։ Նա մի վերջին անգամ էլ յարձակվեցաւ Մեքսիկական պարտամուրհակների դէմ, և այդպէսով 1868-ին կատարեալ առաւ իր յաղթութիւնը։ Մի և նոյն ժամանակ նա չը մոռացաւ և իտալական արշաւանքը, որը երկրորդ կայսրութեան օրով, այսինքն 1867-ին, հաղել թէ կարողանում էր պահպանել, և այն էլ ամենաճանաչ հանդանքների մէջ։ Գերմանական զորքերը նոյնպէս նրան ստիպեցին մի քանի ձուներ խօսել, և Գատէյի դաշնադրութիւնից սկսած, նա անդադար բողոքում էր այն բռնաբարութիւնների դէմ, որոնցից ապահովացրել էր Եւրոպական դաշնադրութեան երաշխաւորութիւնը։ Վերջապէս ներքին ազատամտական ու ռամկապետական յատաճարիմութեանը վերաբերեալ բոլոր հարցերը, նրան ամբիւն էին բարձրացնում։ Նա ամենաջերմ պաշտպան հանդիսացաւ նոյնպէս և կալուածատերերի ու ալիւրական գաղթականութիւնների իրաւունքների ու նրանց շահերի։

Չը նայելով նրա արած այնքան ծառայութիւններին, ու նրա եռանդուն գործունէութեանը, նրա թշնամիներն այնքան զօրացել էին, որ քիչ էր մնում, թէ 1869-ի ընդհանուր ընտրութիւնների ժամանակ նա պարտւումէր զուրէր միայն մի շատ աննշան ձայների առաւելութիւն կարողացաւ նրան պահպանել իր տեղը։ Իսկ մանաւոր ընտրութիւնների ժամանակ, նա յոյս դնելով իր ընդհանր ժողովրդականութեան վրա, կարծում էր, որ բացի այն, որ նրան բազմաթիւ քուէներ կը տան, այլ և կրնարեն նրա զարգափարակիցներից շատերին օրէնսդրական ժողովի համար։

Նրա ամենամեծ շանք ԱՆԻՆ ու ԲՈՒՆ ընտրութիւնների մէջ էր սպասվում։ Նրա աշխատութիւնը կատարեալ եղաւ Լիօնում—նրա ծննդեան քաղաքում, ուր 22,576 ընտրողներից նա միայն 5,991 ձայն ստացաւ, իսկ մնացած բոլոր 16,585 ձայներն ստացաւ սօցիալական կանդիդատ Բասպայ։ Փարիզում մանաւանդ միջոցութիւն աւելի ջերմ եղաւ նրան ընդդիմադրեցին պ. Կանտաղէլին, իբրեւ ընդդիմադրական կուսակցութեան աւելի արմատական ներկայացուցիչ, և պ. Բոշթօրին, իբրեւ իշխանութեանը մանաւորապէս առեւելի կանդիդատ։ Ժիւլ-Մալրի առաջին անգամ 34,308 քուէարկողներից ստացաւ միայն 12,028 ձայն, իսկ մնացածներից 10,033 բացաւ պ. Բոշթօր, և 7437-ը—պ. Կանտաղէլ։ Իսկ երկրորդ քուէարկութեան ժամանակ, պ. Բոշթօր կարողացաւ պաշտպանել իր կանդիդատութիւնը. իսկ պ. Կանտաղէլ կատարեալ անաջողութիւն ունեցաւ, և հրաժարվեց իր կանդիդատութիւնից, ասպարէզը թողնելով երկու հակառակորդներին, որոնցից պ. Ժիւլ-Մալրի իր հակառակորդին ստացաւ 14,503 ձայների դէմ ստացաւ 18,267 ձայն։ Պէտք է ասած, որ առհասարակ Ժիւլ-Մալրի մի առանձին մեծանշանութեամբ էր ստանում ընդհանուր քուէարկութեան բոլոր այս կապի զինքը, որոնցով զանազան կուսակցութիւններ աւելի որոշ զոյններով էին ցոյց տալի իրանց ապերախութիւնը։

Ժիւլ-Մալրի երբէք չը դադարեց փաստաբանութեամբ պարապելուց, և այդ ասպարէզի մէջ էլ նա նոյնպէս եռանդ ու նոյնպէս գործունէութիւն ցոյց տուեց, որչափ և քաղաքական ասպարիզում։ Նա բազմաթիւ գործեր է պաշտպանել թէ Փարիզում և թէ նա հանգնեւում և նրա պաշտպանած զործերի ամենամեծ մասը սատակ հուշակաւոր են և դրէ։ 1860-ին նա Փարիզի փաստաբանների զինաւոր ընտրվեցաւ, այդ մի և նոյն պաշտօնի համար նրան ընտրեցին և յաջորդեցին 1861 թիւին։ 1867-ին էլ նրա գրականական ու հետադարձ պերճախօսութիւնները Վ. Կուզէնի փոխարէն նրան ակադէմիայի անդամ ընտրել տուին։ Նրա ընդունելութեան ձառը ահաղին արմուկից ցցեց գրականական աշխարհի մէջ, որը նրա հակառակորդներն աշխատում էին ծառայեցնել ի վնաս նրա ունեցած ժողովրդականութեան։ Մի և նոյն պրինցիպները, ինչ որ նա խօսեց իր ընդունելութեան ձառի մէջ, նա պաշտպանում էր և Բուրբոնեան պալատում։

Ասում են, որ նա զանազան բրօշուրներ է հրատարակել, ինչպէս օրինակ 1833-ին նա Լիօնում հրատարակեց «De la Coalition des chefs d'atelier de Lyon», «Anathème», «Si-xième procès du précurseur», «La liberté de la presse», «Défense de Félix Orsini»։ Եւ Լեւ. բացի այս բոլորը, 1837-ին նա սկսեց ժամանակակից մարդոց կենսագրութիւնները գրել. բայց նրա այս աշխատասիրութեանց զգալիագուպէս միայն երկու փոքրիկ տետրակներ լոյս տեսան։ 1868-ի յունիսին, նա իր ձախակողմեան կուսակից Էնոմ և էրն. Պիկարի հետ «Electeur» անունով մի ամենօրեայ քաղաքական թերթ հրատարակեց, որի նոյն իսկ առաջին համարն արգելեցաւ, և այդ պատճառով նրա հետեւողներին թիւր կարճ ժամանակամիջոցում 40,000-ի հասաւ։ 1869-ի յունիսին նա մի քանի նշանաւոր անձանց հետ մանակցեց Վալէտինի դահլիճի ազատամտական և գրականական վիճաբանութիւններին. բայց պէտք է խոստովանած, որ այդ վիճաբանութիւններն աւելի քաղաքական նշանակութիւն ունէին, քան թէ գրականական։

Նոյնպէս Ժիւլ-Մալրին են վերաբերում «Trait d'union» վերնագրով մի բեմական գրութեամբ, որը խաղացվեցաւ 1865-ի ապրիլին նրա տանը մի գրամատիկական երեկոյի ժամանակ։ Վերջապէս նրան են վերաբերում և մի փոքրիկ հատոր երկտապրակական ոտանաւորներ, որը թէպէտ և տպագրվել է, բայց վաճառքի չէ հասնում։

Բացի այն, որ այս մեծ քաղաքագէտը հանդիսատես եղաւ իր հայրենիքում կատարված այնքան դրամաների, որոնց պատկերները յաճախակի փոփոխութիւնների էին ենթարկվում, ձախտաւորը կամեցաւ, որ նա հանդիսատես լինի և մի վերջին ձգնաժամին, այն է 1870-71-ի կորստաբեր պատերազմներին։

Այս միջոցներին նա արդէն իր թշնամիներ շնորհիւ հետացած էր քաղաքական ասպարէզից, բայց տեսնելով հայրենիքի վտանգը, նորից թնդաց նրա ծերացած երակների մէջ երկտապրակական արեան հոսանքը, և նա արտասանեց երկու անգոյշ նախադասութիւններ, որոնք յետոյ նրա թշնամիների բերանում ծաղրածութեան առարկայ դարձան, և ամեն անգամ երբ նա կամենում էր նորից հանդէս գութա զալ փաստաբանական ասպարէզի մէջ, հակահանրապետական կուսակցութիւններն իսկոյն սկսում էին նրան ծաղրել պատերազմի ժամանակ նրա արտասանած այս երկու նախադասութիւններով։ «Pas un pouce de notre territoire, pas une pierre de nos fortresses»։ (Ոչ մեր երկրից մի մատը հող կը զիւշանի) և ոչ էլ մեր ամրոցներից մի քար)։ Ամենից աւելի Ժիւլ-Մալրին անտանելի էր այն, որ նրան հեռացրել էին այն գործունէութեանց, որին նա նուիրել էր իր ամբողջ կենսաւ...

Փրանսիական ՏՐԻԲՈՒՆԻ վաղեմի ջաշը, Նապոլէոն III-ի յաղթական ու ահարկութեամբ, Փրանսիական ակադէմիայի անդամ և Փրանսիական երրորդ հանրապետութեան արտաքին գործերի նախկին մինիստրը, այժմ դատաւարութեամբ էր փոխ քաղաքական գործունէութեան անյայտութեան մէջ, և սքոլիպլած էր բաւականապէս նրան իբրեւ որորմութիւն սոււած մինչև մահ սէնատորական պաշտօնով։

Ժիւլ-Մալրի մահը Փրանսիային զրկեց նրա հին շփոթալիս պատկանող ամենաշնանաւոր ու ամենապերճախօս հոգեւորը։ Նրա պերճախօսութիւնը կրում էր իր վրա այն էպիսոյայի կնիքը, երբ Փրանսիան սկսեց ծաղկել և զարգանալ յառաջդիմութեան շաւղով։

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

